



<https://www.printo.it/pediatric-rheumatology/AM/intro>

Դեղորայքային բուժում

Տարբերակ 2016

8. Լեֆյունոմիդ

8.1 Նկարագրությունը

Լեֆյունոմիդը այլընտրանքային տարբերակ է Մետոտրեքսատի նկատմամբ անտանելիոլթյուն ունեցող հիվանդների համար: Ինչևիցե մանկական արթրիտի համար այս դեղի օգտագործման փորձը փոքր է և այն հաստատված չէ կարգավորող մարմինների կողմից:

8.2 Դոզան / նշանակման եղանակները

20 կգ-ից պակաս քաշ ունեցողներ երեխաները ստանում են 100մգ բերանացի մեկ օր, որից հետո 10մգ շարունակական դոզա՝ օրը մեջ ռեժիմով: 20-40 մգ քաշ ունեցող երեխաներին տրվում է 100մգ

Լեֆյունոմիդ երկու օր, ապա շարունակվում է 10մգ օրը դոզայով: 40կգ-ից ավել քաշ ունեցող երեխաները ստանում են 100մգ

Լեֆյունոմիդ երեք օր, որին հետևում է 20մգ/օրը շարունակական դոզան:

Քանի որ Լեֆյունոմիդը տեռատոգեն է (կարող է առաջացնել անոմալիաներ պտղի մոտ), իգակա սեռի հիվանդները պետք է ունենան հղիության թեսթի բացասական արդյունքներ մինչև այս բուժումը սկսելը և օգտագործել համապատասխան հակաբեղմնավորիչներ:

8.3 Կողմնային ազդեցությունները

Հիմնական կողմնային ազդեցություններն են՝ լուծը, սրտխառնոցը, փսխումը: Տոքսիկ ազդեցություն չի հայտ գալու դեպքում ցուցված է

բուժումը հստակ ստիպումներով, բժշկի հսկողությամբ:

8.4 Ցուցումները հիմնական մակական ռևմատիկ հիվանդությունների ժամանակ

Յուզվենիլ Իդիոպաթիկ Արթրիտ (դեղը հաստատված չէ Յուզվենիլ Իդիոպաթիկ Արթրիտի գտագործման համար)

Նորանոր դեղեր են ստեղծվում Մանկական Ռևմատոլոգիական Միջազգային Փորձարկումների Կազմակերպության (PRINTO) և Մանկական Ռևմատոլոգիական Համագործակցական Հետազոտական Խմբի (PRCSG at www.prcsg.org) դեղագործական ընկերություններում և կլինիկական հետազոտողների կողմից: PRINTO և PRCSG ներգրավված են պրոտոկոլների, հիվանդության պատմությունների, վերանայման, տվյալների հավաքագրման, տվյալների վերլուծման և բժշկական գրականությունում հաշվետվության մեջ:

Մինչև ձեր բժիշկը իրավունք կունենա նշանակել նոր դեղամիջոց, պետք է մանրամասն ստուգվի դրա անվտանգությունը և հիվանդին բուժելու կարողությունը կլինիկական փորձերով: Սովորաբար դեղի օգտագործումը երեխաների մոտ հաջորդ քայլն է մեծահասակների մոտ դրանց օգտագործումից հետո, հետևաբար որոշ դեղեր կարող են կիրառվել միայն մեծահասակների մոտ: Թուլյատրելի դեղորայքների աճի հետ զուգահեռ նվազում են առանց գրանցման դեղերի օգտագործումը: Դուք կարող եք օգնել նոր դեղերի զարգացմանը՝ մասնակցելով կլինիկական փորձերին:

Ավելի շատ տեղեկատվություն կարող եք գտնել հեռևյալ կայքերում.

PRINTO www.printo.it; <https://www.printo.it/pediatric-rheumatology/>

PRCSG www.prcsg.org

Ընթացքում գտնվող կլինիկական փորձեր

www.clinicaltrialsregister.eu/

www.clinicaltrials.gov

Եվրոպայում երեխաների համար նոր դեղորայքի զարգացման համաձայնեցված պլաններ

www.ema.europa.eu/ema/index.jsp?curl=pages/medicines/landing/pip_search.jsp&mid=WC0b01ac058001d129